ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
<<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲԸ 16.02.2016թ. ԹԻՎ 93-Ա ՀՐԱՄԱՆՈՎ
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

17 հունիսի 2016 թ,
ժամը 12:00

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33)

Մասնակցում էին.

**Հանձնաժողովի անդամ՝**

Ա.Օհանյան ՕԵԿզ ՀԿԾ <<Աշտարակ>> ՏԿ ղեկ.

**Հանձնաժողովի քարտուղար**

Հ. Հակոբյան

Վ.Ասրյանը և Հ.Մելիքբեկյանը չմասնակցեցին հանձնաժողովի նիստին: Նիստին ներկա էին <<Մարինե-90>> ՍՊԸ և <<Կոնսել>> ՍՊԸ ներկայացուցիչները:

## ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՆ(1)-ՇՀԱՊՁԲ-15/12-16 ծածկագրով <<Կենցաղային տեխնիկա>> ապրանքախմբում ընդգրկված ապրանքատեսակների գնման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտերի բացում և գնահատում:

Հրապարակվեց հայտ ներկայացրած մասնակիցների անվանումը և հասցեն՝

- Գրիգոր Այվազյան Ա/Ձ (հասցե՝ Արարատի մարզ, գ.Ոստան, Թեհլերյան 14)
- <<Մարինե-90>> ՍՊԸ (հասցե՝ ք.Երևան Բաչձրաբերդի 47)
- <<Կոնսել>> ՍՊԸ (հասցե՝ ք.Երևան Արարատյան 90/2)

1. Ծրարները կազմելու և ներկայացնելու տվյալների ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը արձանագրեց, որ ծրարները կազմված և ներկայացված են համապատասխան սահմանված կարգին:

Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված ծրարներում առկա էին սույն ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերը, որոնք համապատասխանում են սահմանված պահանջներին: Հանձնաժողովի անդամ Ա.Օհանյանը հրապարակեց գնման առարկայի նախահաշվային գները: Այնուհետև հրապարակվեց և գնահատվեց մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները առանց ԱԱՀ-ի: <<Մարինա-90>> ՍՊԸ-ն և Գրիգոր Այվազյան Ա/Ձ չեն հանդիսանում ԱԱՀ վճարող:

| Հ/Բ | Գնման առարկան | Չ/Մ | Քանակը | Առավելագույն գինը (ՀՀ դրամ) | Գրիգոր Այվազյան Ա/Ձ | <<Կոնսել>> ՍՊԸ | <<Մարինե-90>> ՍՊԸ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Կենցաղային սառնարաններ՝ 2 խցիկանի (սառցարանը վերևում), տարողությունը՝ 280 լ | հատ | 1 | **250 000** | **250 000** | | **298 000** |
| 2 | Էլեկտրական սրճեփներ | հատ | 1 | **6 750** | | | **11 000** |
| 3 | Թեյի պատրաստման էլեկտրական սարքեր | հատ | 1 | **20 700** | | | **24 000** |
| 4 | Օդափոխիչ | հատ | 6 | **18 000** | | | **66 000** |
| 5 | Օդորակիչ 180-200ք.մ. համար | հատ | 1 | **460 000** | **350 000** | **241666.67** | |
| 6 | HIROSS օդորակչի օդի զտիչ | հատ | 32 | **3 520 000** | | | |

<<Մարինե-90>> ՍՊԸ հետ տեղում վարվեցին բանակցություններ 2, 3 և 4 չափաբաժինների վերաբերյալ, որի արդյունքում 3-րդ չափաբաժնի գինը նվազեցվեց և կազմեց **20 000 ՀՀ դրամ**: 2 և 4 չափաբաժիններով գները չնվազեցվեցին: 6-րդ չափաբաժնով գնային առաջարկներ չեն ներկայացվել:

Քննարկումների արդյունքում հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. Սույն ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնով 1, 2 և 3-րդ տեղերը զբաղեցրած ներքոհիշյալ մասնակիցների ցանկը

**1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներ՝**

- Գրիգոր Այվազյան Ա/Ձ - 1-ին չափաբաժին
- <<Կոնսել>> ՍՊԸ-5-րդ չափաբաժին
- <<Մարինե-90>> ՍՊԸ-3-րդ չափաբաժին

**2-րդ տեղ զբաղեցրած մասնակիցներ՝**

- Գրիգոր Այվազյան Ա/Ձ -5-րդ չափաբաժին

2. Ծանուցել առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցներին՝ Գրիգոր Այվազյան Ա/Ձ, <<Կոնսել>> ՍՊԸ-ին և <<Մարինե-90>> ՍՊԸ-ին, առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հայտով առաջարկված ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև <<Կոնսել>> ՍՊԸ ծանուցել, 5-րդ չափաբաժնի վերաբերյալ ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ ցածր գնային առաջարկ (ընդ որում, գնային առաջարկը

համարվում է չհիմնավորված ցածր, եթե այն ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից) ներկայացնելու վերաբերյալ:

3. 2-րդ , 3-րդ և 6-րդ չափաբաժիններով գնումը համարել չկայացած:
4. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ քան 28.06.2016թ. <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲ ընկերությունում:

Ա.Օհանյան Հանձնաժողովի անդամ

Հ.Հակոբյան Հանձնաժողովի քարտուղար